

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԻ ԺՈՐԱՅԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ը.00.02 - "Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և
կառավարում" մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական
աստիճանի հայցման համար ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հայկ Լևոնի Սարգսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Տնտեսագիտության դոկտոր
Լիանա Հայկազի Գրիգորյան

Տնտեսագիտության թեկնածու

Արման Վաչագանի Պողոսյան

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ


Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022թ. դեկտեմբերի 16-ին ժամը 13³⁰ - ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում

Հասցե՝ Երևան 0009, ք. Երևան, Աբովյան 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2022թ. նոյեմբերի 3-ին:

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
տ.գ.թ., դոցենտ



Ա. Հ. Հակոբջանյան

ԱՍԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արեւնախոսության թեմայի արդիականությունը: Շուկայական

հարաբերությունների պայմաններում էականորեն մեծանում է հարկային համակարգի դերը, որը հանդես է գալիս որպես տնտեսության պետական կարգավորման կարևոր գործիք: Քաղաքական անկախության ձեռք բերումից հետո Հայաստանի Հանրապետությունում իրականացված լայնամասշտաբ տնտեսական բարեփոխումների հիմնական նպատակը ժամանակակից շուկայական տնտեսության ձևավորումն էր, ինչը ենթադրում էր տնտեսավարման նոր սկզբունքների ներդրում, սեփականության տարբեր ձևերի ստեղծում, տնտեսական գործունեության ազատականացում, տնտեսական քաղաքականության ուղղությունների մշակման ու իրականացման նոր մոտեցումների որդեգրում և այլն: Իրականացվող ռեֆորմների շրջանակը բավականաչափ լայն էր և, ըստ էության, իր մեջ էր ընդգրկում կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտները: Հանրապետությունում սկիզբ առած լայնամասշտաբ տնտեսական բարեփոխումների հիմնական նպատակներից մեկն էլ շուկայական հարաբերությունների պահանջներին բավարարող հարկային համակարգի ստեղծումն էր, որը հնարավորություն կտար գեներացնել բյուջետային եկամուտների անհրաժեշտ մակարդակ, պատշաճ կերպով իրականացնել պետական գործառույթները, ձևավորել տնտեսական գործունեության համար բարենպաստ միջավայր և, վերջին հաշվով, ապահովել երկրի և հասարակության բնականոն կենսագործունեությունը: Շուկայական հարաբերություններին անցման սկզբնական փուլում իրականացված տնտեսական վերափոխումները, անշուշտ, չհանգեցրեցին և չէին էլ կարող հանգեցնել ցանկալի այնպիսի միտումների զարգացմանը, որոնք, ընդհանուր առմամբ, դասական իմաստով, բնորոշ են զարգացած երկրներում գործող հարկային համակարգերին: Որոշ դրական արդյունքներին զուգահեռ, պայմանավորված տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, իրականացված բարեփոխումներն ունեցան նաև մի շարք բացասական հետևանքներ: Մասնավորապես, վերջիններիս թվին կարելի է դասել հարկային քաղաքականության հիմքում դրված որոշ մոտեցումների և սկզբունքների ոչ հստակ, ինչ-որ առումով նաև չարդարացված ընտրությունը, հարկման ճկուն մեխանիզմների բացակայությունը, հարկատեսակների և դրանց դրույքաչափերի տնտեսագիտորեն չիմնավորված սահմանումը և այլն: ՀՀ-ում իրականացված հարկային քաղաքականությունը, տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, առավելապես ունեցել է ֆիսկալ ուղղվածություն: Եթե որոշակի սոցիալ-տնտեսական իրավիճակներում, հիմնականում պայմանավորված պետության ծախսային կարիքների ծավալով, նման քաղաքականությունն ինչ-որ առումով արդարացված է եղել, ապա նույնը չենք կարող ասել երկարաժամկետ հատվածի համար: Այս առումով, մեծ կարևորություն է ձեռք բերում տնտեսության հարկային կարգավորումը, որը խթանիչ ազդեցություն կարող է ունենալ ինչպես տնտեսական միջավայրի բարելավման, այնպես էլ հարկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման վրա: Սակայն Հայաստանի Հանրապետությունում հարկային կարգավորման գործիքակազմի

վերլուծությունը ցույց է տալիս, որ այն բավականաչափ թույլ է, հստակեցված չեն հետապնդվող խնդիրները, դրանցից շատերը տնտեսագիտական հիմնավորվածության տեսանկյունից խոցելի են, իսկ ստացված արդյունքները՝ խնդրահարույց: Բնականաբար, դա իր համապատասխան անդրադարձն է ունենում ինչպես ընդհանուր հարկային համակարգի, այնպես էլ տնտեսության վրա: Տնտեսական զարգացման ներկա փուլում, ելնելով ՀՀ տնտեսության երկարաժամկետ զարգացման հրամայականից, մեծ կարևորություն է ձեռք բերում տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կատարելագործումն ու դրանց կիրառման արդյունավետության բարձրացումը: Ատենախոսությունը նվիրված է նշված հիմնահարցերի ուսումնասիրությանը, ինչով էլ պայմանավորված են թեմայի **հրապարակությունն ու արդիականությունը:**

Հեղազոտության նպատակը և խնդիրները: Աշխատանքի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կատարելագործմանն ուղղված մոտեցումների և առաջարկությունների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել տնտեսության պետական կարգավորման էությունը և գնահատել հարկային համակարգի դերն այդ գործընթացում,
- ուսումնասիրել հարկային քաղաքականության սկզբունքներն ու մեթոդները, գնահատել դրանց տեղը հարկային հարաբերությունների համակարգում,
- վերլուծել հարկային համակարգի բնականոն գործունեության ապահովման և հարկային քաղաքականության իրականացման վրա ազդող գործոնները,
- վերլուծել Հայաստանի Հանրապետությունում հարկային կարգավորման օրենսդրաիրավական և կազմակերպական հիմքերը, ուսումնասիրել այդ ուղղությամբ առկա միջազգային փորձը և գնահատել դրա տեղայնացման հնարավորությունները հանրապետությունում,
- բացահայտել տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կիրառման հիմնախնդիրները և դրանց արդյունավետության վրա ազդող գործոնները ՀՀ-ում,
- մշակել հարկային համակարգի զարգացման և հարկային կարգավորման բարելավման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում:

Հեղազոտության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրության օբյեկտը ՀՀ հարկային համակարգն է, իսկ ուսումնասիրության առարկան՝ տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքակազմը:

Արենախոսության գիտական նորույթը և հիմնական արդյունքները: Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, կայանում են հետևյալում.

- հարկաբյուջետային ցուցանիշների և իրականացված քաղաքականության վերլուծության հիման վրա բացահայտվել են հանրապետությունում հարկային եկամուտների հավաքագրման հիմնախնդիրները և մշակվել են հարկային քաղաքականության կատարելագործման և դրա կանխատեսելիության բարձրացմանն ուղղված մոտեցումներ,
- հանրապետությունում հարկային կարգավորման գործիքակազմի համակողմանի վերլուծության արդյունքում գնահատվել է առանձին հարկատեսակների գծով կարգավորիչ գործառույթի գործնական իրացման մակարդակը և դրա հետևանքները տնտեսական գործընթացների կարգավորման վրա և առաջարկվել են մոտեցումներ տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների արդյունավետության բարձրացմանն ուղղությամբ, մասնավորապես, հարկման բազաների և կիրառվող դրույքաչափերի տնտեսագիտական հիմնավորվածության բարձրացման վերաբերյալ,
- հարկային կարգավորման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև դրա տնտեսական և սոցիալական նպատակների արդյունավետ համադրման նպատակով մշակվել են ֆիզիկական անձանց եկամուտների և գույքի հարկման կատարելագործմանն ուղիներ,
- հարկային արտոնությունների ուղղությունների, դրանց հիմնավորվածության, շահառուների և հասցեականության քննարկման շրջանակներում մշակվել են մոտեցումներ հարկային արտոնությունների՝ որպես հարկային կարգավորման գործիքի կատարելագործմանն ուղղությամբ:

Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կատարելագործման վերաբերյալ առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից՝ հանրապետությունում տնտեսության զարգացման, գործարար միջավայրի բարելավման և հարկային համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների համալիրի մշակման և դրա հետևողական իրականացման ընթացքում: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել նաև նշված համակարգերում աշխատողների համար:

Արեւնախոսության արդյունքների փորձարկումը:

Արեւնախոսության գիտագործնական նշանակության խնդիրները քննարկվել են Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում: Ստացված արդյունքների հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված 6 գիտական հոդվածներում:

Արենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության տեքստը շարադրված է 140 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը, պարունակում է 4 զծապատկեր և 10 աղյուսակ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպվում են հետազոտության նպատակը և խնդիրները, հստակեցվում են հետազոտության օբյեկտը և առարկան, մեթոդաբանությունը, հակիրճ ներկայացվում են հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորոյթը, դրանց գիտագործնական նշանակությունը, ինչպես նաև արդյունքների հրապարակումը, ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Արենախոսության առաջին՝ <<Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների էությունը և տնտեսական բովանդակությունը>> գլխում քննարկվել են տնտեսության պետական կարգավորման նպատակներն ու խնդիրները, հարկային համակարգի դերն այդ գործընթացում և հարկային արտոնությունների նշանակությունը հարկային կարգավորման գործում:

Շուկայական հարաբերությունների պայմաններում պետությունն առանձնահատուկ դեր ունի համապատասխան միջավայրի ձևավորման և շուկայական ինստիտուտների ստեղծման գործում: Սոցիալ-տնտեսական գործընթացների վրա պետական ներգործության կարևոր մեթոդներից է հարկային կարգավորումը, որն ընդհանուր տնտեսական և, մասնավորապես, հարկային քաղաքականության կարևոր ուղղություններից է:¹ Այն, որպես կանոն, իրականացվում է հարկման ընդհանուր մակարդակի ավելացման կամ կրճատման միջոցով՝ նաև հարկային տարբեր խթանների կիրառմամբ: Ժամանակակից մասնագիտական գրականությունում մեջ տարբեր հեղինակների կողմից առանձնացվում են հարկային կարգավորման հետևյալ ընդհանուր բնութագրական գծերը:² Առաջին, հարկային կարգավորումը տնտեսության պետական կարգավորման կարևոր տարրերից է: Երկրորդ, այն, որպես տնտեսական լծակ, օգտագործվում է տնտեսական հարաբերությունների մասնակիցների վրա պետության նպատակաուղղված ներգործության նպատակով՝ վարվող

¹ Финансовые и денежно-кредитные методы регулирования экономики. Под общ. ред. Н. Истоминой. Екатеринбург. Изд-во Урал. ун-та. 2020г. стр. 29

² Ермакова Е. Налоговое регулирование в системе государственного налогового менеджмента. Финансы и кредит. 2007г. № 8. стр. 28–32.

հարկային քաղաքականության շրջանակներում դրված խնդիրների լուծման համար: Երրորդ, հարկային կարգավորումը հասարակության և պետության տնտեսական ու սոցիալական վիճակի վրա ներգործության գործընթաց է՝ սոցիալ-տնտեսական ցանկալի արդյունքների ձեռք բերման նպատակով:

Տնտեսության հարկային կարգավորման գործիքներն իրենց նշանակությամբ կարող են ունենալ ինչպես խթանող, այնպես էլ զսպող բնույթ: Ելնելով դրանից, հարկային քաղաքականության մշակման ժամանակ պետությունը պետք է հաշվի առնի հարկային հարաբերությունների բոլոր կողմերի շահերը և հետաքրքրությունները՝ ինչպես հարկերի նվազեցման տնտեսավարող սուբյեկտների ձգտումը, այնպես էլ պետության կողմից իր գործառույթների լիարժեք իրականացման անհրաժեշտությունը: Տնտեսական զարգացման ներկա փուլում համաշխարհային տնտեսությունում հարկային մրցակցության խորացումը երկրներին ստիպում է կիրառել հարկային խթանման տարբեր գործիքներ, որոնց նպատակը սեփական տնտեսություն կապիտալի և այլ ռեսուրսների ներհույսի խթանումն է կամ դրանց արտահույսի կանխումը: Դրանց միջոցով պետությունը հնարավորություն է ստանում նպատակային ներգործություն իրականացնել տնտեսության, նրա առանձին ճյուղերի, ոլորտների, ինչպես նաև տնտեսական և սոցիալական գործընթացների վրա:³ Հարկային խթանները, որպես կանոն, հանդես են գալիս հարկային արձակուրդների տրամադրման, հարկային ցածր դրույքաչափերի կիրառման, հարկման պարզեցված ռեժիմների սահմանման և այլ եղանակներով:

Հարկային կարգավորման գործիքներից հատկապես ուշադրության արժանի են հարկային արտոնությունները, որոնց տրամադրման ժամանակ պետությունը պետք է իրականացնի արդյունավետ կառավարիչի դեր և ճիշտ գնահատի արտոնությունների տրամադրման անհրաժեշտությունը և դրանց համապատասխանությունը տնտեսության զարգացման պահանջներին և հասարակական շահերին: Հետևաբար, պետք է խիստ կարևորել հարկային արտոնությունների սոցիալ-տնտեսական արդյունավետության գնահատումը, որի արդյունքները պետք է համապատասխան հետևանքներ առաջացնեն այդ արտոնություններից օգտվողների համար՝ չվճարված հարկերի հաշվին տնտեսված գումարների նպատակային կամ ոչ նպատակային օգտագործման պատճառով: Ընդ որում, դա վերաբերում է ոչ միայն հարկային արտոնություններին, այլ նաև հարկային կարգավորման մյուս գործիքներին:

Արենախոսության երկրորդ՝ «Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կիրառման առանձնահատկությունները ՀՀ-ում» գլխում

³ Михайлишина Я. Теоретические основы системы налогового стимулирования. Налоги и налогообложение. 2012г. № 4. стр. 44-52

վերլուծության են ենթարկվել ՀՀ-ում հարկային քաղաքականության հիմնական ուղղությունները, տնտեսության հարկային կարգավորման գործիքակազմը և հարկային կարգավորման հիմնախնդիրներն ու դրանց ազդեցությունը տնտեսության վրա:

Տնտեսական ազատականացման անցած ժամանակահատվածում հանրապետությունում ձևավորվեց մի հարկային համակարգ, որն իր բոլոր թերություններով հանդերձ, հիմնականում կարողացավ բավարարել պետության նվազագույն ծախսային կարիքները: Ըստ էության, դրա վառ վկայություն են հանդիսանում վերջին տարիներին հանրապետությունում իրականացված հարկային քաղաքականության արդյունքում գրանցված ցուցանիշները: Մասնավորապես, բացառությամբ 2020 թվականի, գրանցվել է պետական բյուջեի հարկային եկամուտներն անվանական աճ: Իհարկե, պետք է նաև նկատի ունենալ, որ տոկոսային արտահայտությամբ դրանց աճը չի կրել համաչափ բնույթ (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1.⁴

Հարկային եկամուտների աճի դինամիկան 2010-2021 թվականներին


	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Ընդ. եկամուտներ /մլրդ դրամ/	780.4	880.8	946.2	1071.4	1144.7	1167.7	1171.1	1237.8	1341.7	1565.5	1560.4	1684.1
Աճը կամ նվազումը նախորդ տարվա համեմատությամբ (%)	13.1	12.8	7.4	13.2	6.8	2.0	0.3	5.7	8.4	16.7	0.3	7.7
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	699.4	777.4	878.4	1000.9	1064.1	1067.9	1079.7	1158.0	1258.1	1464.3	1385.2	1586.9
Աճը կամ նվազումը նախորդ տարվա համեմատությամբ (%)	11.8	11.1	13.0	13.9	6.3	0.4	1.1	7.3	8.6	16.4	-5.4	14.5

⁴ 2014-2019 թվականների տվյալները վերցված են Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2020, 2010-2013 թվականների տվյալները վերցված են Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2016, 2020 թվականների տվյալները վերցված են Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2021, 2021 թվականների տվյալները վերցված են Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-դեկտեմբերին հրապարակումներից: www.armstat.am

Ինչպես նկատում ենք աղյուսակ 1-ի տվյալներից, վերջին տարիներին հանրապետությունում հարկային եկամուտների աճի տեմպերը հիմնականում կրել են տատանողական բնույթ: Եթե 2008 թվականի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո ընկած ժամանակահատվածում՝ մասնավորապես 2010 և 2011 թվականներին աճի տեմպերը կազմել են համապատասխանաբար 11.8 և 11.1 տոկոս, ապա 2015 և 2016 թվականներին այդ ցուցանիշը կազմել է 0.4 և 1.1 տոկոս: 2017-2019 թվականներին այն գրանցել է շարունակական աճ՝ համապատասխանաբար 7.3 տոկոս, 8.6 տոկոս և 16.4 տոկոս: 2020 թվականին, պայմանավորված համաճարակային իրավիճակով և պատերազմական գործողություններով, հանրապետությունում արձանագրվել է հարկային եկամուտների աննախադեպ անկում՝ 5.4 տոկոսի չափով: Սակայն արդեն 2021 թվականին այդ ցուցանիշը զգալիորեն վերականգնվել է և գրանցվել է հարկային եկամուտների 14.5 տոկոսով աճ:

Ընդհանուր առմամբ, հարկային համակարգի և իրականացվող հարկային քաղաքականության արդյունավետության գնահատման կարևոր ցուցանիշներից մեկն է հանդիսանում հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը, որը վկայում է երկրում հարկային բեռի բաշխման մակարդակի մասին: 2010-2021 թվականներին գրանցված միջին ցուցանիշը կազմել է 21.3 տոկոս (տես գծապատկեր 1):

Առաջիկա տարիներին հանրապետությունում իրականացվող հարկային քաղաքականության խնդիրներից մեկը պետք է հանդիսանա հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ոչ միայն աստիճանական ավելացումը, այլ նաև դրա համաչափ բաշխումը: Միայն այդ պարագայում հնարավորություններ կստեղծվեն պետության գործառույթների առավել պատշաճ և ամբողջական իրականացման համար:



Գծապատկեր 1. Ընդամենը եկամուտների և հարկային եկամուտների հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2010-2021 թվականներին⁵

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը, ձևավորումից ի վեր, միշտ աչքի է ընկել հարկային արտոնությունների բավականաչափ լայն շրջանակով՝ նպատակ ունենալով ապահովել տնտեսական զարգացման խթաններ և սոցիալական խնդիրների լուծման որոշակի նախադրյալներ: Բնականաբար, դա իր համապատասխան անդրադարձն է ունենում ինչպես ընդհանուր հարկային համակարգի, այնպես էլ տնտեսության վրա: Անշուշտ, արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության տեսանկյունից կարևորվում է հարկային արտոնությունների հետագա կիրառման նպատակահարմարության և դրանց սոցիալ-տնտեսական էֆեկտի գնահատումը: Միաժամանակ, թե արտոնությունների տրամադրումը, և թե դրանց վերացումը պետք է իրականացնել միայն համակողմանի վերլուծությունների արդյունքում, որպես հիմնական պայման դիտարկելով դրանց հասցեականության և սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում օգտակարության ապահովումը:

Արենախոսության երրորդ՝ «Տնտեսության պեղական կարգավորման հարկային գործիքների զարգացման ուղղությունները» գլխում առաջարկվել են Հայաստանի Հանրապետությունում տնտեսության պետական կարգավորմանն ուղղված հարկային քաղաքականության մշակման ու իրականացման ուղղություններ, հարկային կարգավորման տնտեսական և սոցիալական նպատակների համադրման ուղիներ և հարկային վարչարարության զարգացման մոտեցումներ:

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման ժամանակակից փուլում հարկային համակարգը դարձել է ոչ միայն պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական բազայի ձևավորման, այլ նաև երկրում գործարար միջավայրի բարելավման, սոցիալական խնդիրների լուծման, ներդրումային հոսքերի ներգրավման, ինչպես նաև մի շարք այլ խնդիրների լուծման կարևոր միջոց: Քաղաքական և տնտեսական բարեփոխումների իրականացման ներկա փուլում առկա հիմնախնդիրների լուծումը, նախ և առաջ, պայմանավորված է հարկային համակարգի զարգացման մակարդակով, ինչը պահանջում է հարկային քաղաքականության մշակման ու

⁵ 2014-2019 թվականների տվյալները վերցված են Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2020, 2010-2013 թվականների տվյալները վերցված են Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2016, 2020 թվականների տվյալները վերցված են Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2021, 2021 թվականների տվյալները վերցված են Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-դեկտեմբերին հրապարակումներից: www.armstat.am

իրականացման ուղղությամբ տնտեսագիտորեն հիմնավորված և հանրապետությունում ձևավորված տնտեսական և սոցիալական իրողություններից բխող մոտեցումների կիրառում: Հանրապետությունում ներկայումս իրականացվող հարկային քաղաքականության համատեքստում առանձնահատուկ և, ինչ որ առումով, խնդրահարույց նշանակություն ունի հարկային արտոնությունների խնդիրը: Չնայած դրանց շարունակական կրճատմանը, այդուհանդերձ, ներկայումս ևս հարկային արտոնություններն զգալի են հանրապետությունում, ինչը, չենք կարող ասել դրանց սոցիալ-տնտեսական էֆեկտի մասին: Անշուշտ, հարկային արտոնությունների տրամադրման հետևանքով բյուջետային եկամուտների կորուստը բավականաչափ մեծ ծավալ է կազմում՝ հատկապես ֆինանսական սուղ հնարավորությունների պայմաններում: Ավելին, հայտնի չէ, թե հարկային արտոնությունների տրամադրման հետևանքով փաստացի ի՞նչ օգուտներ է ստացել պետությունը գոնե վերջին տաս տարիների ընթացքում, ո՞ր տիպի հարկային արտոնությունների տրամադրումն է եղել արդարացված, ինչպե՞ս են ազդել այդ արտոնությունները տնտեսական աճի և տնտեսության ճյուղային կառուցվածքի վրա և այլն, ինչն էլ թույլ կտա փաստարկված ճշգրտումներ մտցնել հարկային քաղաքականության այս կարևոր հատվածում:

Այս համոզմամբ, հանրապետությունում իրականացվող հարկային քաղաքականությունը պետք է ունենա գիտական հիմնավորվածություն՝ հաշվի առնելով ազգային տնտեսության առանձնահատկությունները և ելնելով ձևավորված մակրոտնտեսական իրավիճակից ու ձեռնարկատիրական գործունեության իրականացման պայմաններից: Անշուշտ, ինչպես հարկային համակարգի բնականոն գործունեության, այնպես էլ գործարար միջավայրի վրա բացասական ազդեցություն են ունենում հարկային օրենսդրության անկայունությունը, հարկային վարչարարության ցածր արդյունավետությունը, իրականացվող հարկային քաղաքականության ֆիսկալ ուղղվածությունը և մի շարք այլ գործոններ: Այս առումով, տնտեսական զարգացման ներկա փուլում հարկային քաղաքականությունը պետք է հիմնված լինի կիրառվող մոտեցումների գիտականորեն հիմնավորվածության վրա՝ հաշվի առնելով սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները, հարկ վճարողների ֆինանսատնտեսական հնարավորությունները և մի շարք այլ պայմաններ:

Հանրապետությունում տնտեսության հարկային կարգավորման կատարելագործմանը կարելի է հասնել տնտեսության պետական կարգավորման շրջանակներում հստակ մակրոտնտեսական ռազմավարության իրականացմամբ՝ ապահովելով տնտեսական, ֆինանսական և հարկային մեթոդների ամբողջ համակցության սերտ փոխկապակցվածությունը: Ընդ որում, հարկային կարգավորումը չպետք է սահմանափակվի միայն տնտեսական նպատակներով, այլ նաև պետք է ուղղված լինի սոցիալական բնույթի տարաբնույթ խնդիրների լուծմանը: Այս տեսանկյունից, հարկային

քաղաքականության իրականացման ժամանակ կարևոր խնդիրներից մեկը հարկային կարգավորման տնտեսական ու սոցիալական նպատակների միջև ցանկալի հարաբերակցության սահմանումն է: Հարկային քաղաքականության նպատակը պետք է լինի ոչ միայն պետության գործառույթների պատշաճ իրականացման համար անհրաժեշտ եկամտային բազայի ձևավորումը, այլ նաև տնտեսության կարգավորումը ինչպես խթանման, այնպես էլ ապախթանման տեսանկյունից: Պետությունը պետք է ակտիվ և նպատակային կերպով ազդի տնտեսավարող սուբյեկտների և բնակչության տնտեսական վարքագծի վրա՝ սահմանելով հարկման տարբեր բազաներ, տարբերակված հարկային դրույքաչափեր և տրամադրելով հարկային արտոնություններ: Հարկային կարգավորման տեսանկյունից հատկապես կարևորվում է հարկերի ֆիսկալ և կարգավորիչ գործառույթների միջև այնպիսի հարաբերակցության հաստատումը, որը, մի կողմից, չի վտանգի պետական եկամուտների գեներացման ու նվազագույն ծախսային պարտավորությունների իրականացման գործընթացը և, մյուս կողմից, չի սահմանափակի տնտեսական գործունեության իրականացման ու ընդլայնման հնարավորությունները: Հետևաբար, պետությունը հարկային կարգավորման գործիքակազմը կիրառելուց առաջ նախ պետք է հստակեցնի և որոշակիացնի այն նպատակը, որին փորձում է հասնել կարգավորման արդյունքում: Դա կարևոր է հատկապես այն հանգամանքով պայմանավորված, որ կախված հարկային կարգավորման նպատակներից՝ ընտրված միջոցներն ու գործիքները տարբեր լինել:

Ատենախոսության <<եզրակացություններ>> բաժնում ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները, որոնցից հատկանշական են հետևյալները:

1. Վերջին տարիներին հանրապետությունում արձանագրված հիմնական ցուցանիշները, եթե բացառենք 2020 թվականի զարգացումները, հիմնականում վկայում են հարկային համակարգում որոշակի դրական միտումների մասին: Դրա արտացոլումն են հանդիսանում ինչպես ընդհանուր հարկային եկամուտների, այնպես էլ առանձին հարկատեսակների գծով արձանագրված աճը: Հատկապես ուշագրավ է այն հանգամանքը, որ դա հիմնականում տեղի է ունեցել առանց հարկային բեռի էական ավելացման և հիմնականում կապված է հարկային վարչարարության բարելավման հետ: Միաժամանակ, պետք է նշել, որ հանրապետությունում գործող հարկային համակարգը, ապահովելով պետության գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների նվազագույն մակարդակ, դեռևս հնարավորություն չի տալիս ձևավորել պետական եկամուտների հավաքագրման այնպիսի ծավալ, որը լիարժեք նախադրյալներ կստեղծեր տնտեսության զարգացման և հասարակության բարեկեցության բարձրացման համար: Անշուշտ, նման իրավիճակը որոշակիորեն պայմանավորված է նաև հարկային կարգավորման գործիքների կիրառման ցածր արդյունավետությամբ:

2. Հանրապետության բյուջետային եկամուտների կազմում ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող հարկատեսակի՝ ավելացված արժեքի հարկի գծով սահմանված հարկային արտոնությունները հիմնականում հանդես են գալիս հարկից ազատման տեսքով, որից շատ դեպքերում օգտվում են նաև բարձր եկամուտներ ունեցողները: Ակցիզային հարկի մասով կարգավորման գործիքները հիմնականում հետապնդում են ապախթանող բնույթ՝ ենթասակցիզային ապրանքների գների բարձրացման միջոցով սպառման ծավալները կրճատելու, ինչպես նաև լրացուցիչ ֆիսկալ խնդիրներ լուծելու համար: Եկամտային հարկի գծով կարգավորման գործիքները հիմնականում ունեն սոցիալական նշանակություն, ինչը, նախ և առաջ, պայմանավորված է տվյալ հարկատեսակի՝ որպես բնակչության կողմից վճարվող հարկի նշանակությամբ: Եկամտային հարկի գծով հանրապետությունում գոյություն ունեցող հիմնախնդիրներից մեկն այն է, որ եկամտային հարկի հարկման բազայից բնակչության եկամուտների զգալի մասը դուրս է մնում կամ, այլ կերպ ասած, հարկային հաշվառման չի ենթարկվում: Արդյունքում, եկամտային հարկը դառնում է ավելի շատ աշխատավարձից, քան եկամուտներից գանձվող հարկ: Ընդ որում, այստեղ խոսքը գնում է միայն ֆորմալ աշխատավարձի մասին և դրանում, բնականաբար, ներառված չեն ոչ ֆորմալ եղանակով վճարվող աշխատավարձը:
3. Անշարժ գույքի հարկի գծով գործող հարկային արտոնությունները ևս հիմնականում ունեն սոցիալական նշանակություն, չնայած այն հանգամանքին, որ այս հարկատեսակն ազդեցություն ունի նաև տնտեսական գործունեության պայմանների վրա: Հարկային կարգավորման տեսանկյունից գույքի հարկումը պետք է իրականացվի ճկուն պրոգրեսիվ սանդղակի միջոցով, իսկ հարկման բազայի գնահատումը պետք է ներդաշնակ լինի տվյալ գույքի շուկայական արժեքին: Առավել մեծ չափով պետք է հարկել տեսանելի հարստությունը՝ ավելի բարձր դրույքաչափեր սահմանելով շքեղ առանձնատների և թանկարժեք ավտոմեքենաների համար:
4. Արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության տեսանկյունից կարևորվում է հարկային արտոնությունների հետագա կիրառման նպատակահարմարության և դրանց սոցիալ-տնտեսական էֆեկտի գնահատումը: Թե արտոնությունների տրամադրումը, և թե դրանց վերացումը պետք է իրականացնել միայն համակողմանի վերլուծությունների արդյունքում, որպես հիմնական պայման դիտարկելով դրանց հասցեականության և սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում օգտակարության ապահովումը: Հարկային արտոնությունների տրամադրման կամ դրանց դադարեցման ժամանակ, նախ և առաջ, պետք է գնահատել դրանցով պայմանավորված օգուտները և վնասներն ինչպես պետական բյուջեի, այնպես էլ հարկ վճարողների տեսանկյունից: Միաժամանակ, պետք է

գնահատվի նաև արտոնությունների ազդեցությունը տնտեսական ակտիվության, գործարար ու ներդրումային գրավչության, տնտեսական մրցակցության և այլ կարևոր ցուցանիշների վրա: Հարկային արտոնությունները կարող են արդարացված լինել միայն այն դեպքում, եթե դրանց կիրառման արդյունքում պետության համար ստացվող "օգուտները" համարժեք են կրած "կորուստներին":

5. Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեն մի շարք խնդիրներ, որոնք որոշակիորեն անդրադառնում են հարկային համակարգի գործունեության վրա: Մասնավորապես, տնտեսական գործունեության կազմակերպմամբ և իրականացմամբ պայմանավորված գոյություն ունեն տարբեր տեսակի տուրքեր և այլ պարտադիր վճարներ, որոնք, չնայած հարկային գանձումներ չեն հանդիսանում, սակայն այս կամ այն կերպ անդրադառնում են հարկատուի ֆինանսական պարտավորությունների և ձեռնակատիրական գործունեության պայմանների վրա: Ավելին, դրանցից որոշները չեն բխում համապատասխան օրենքներով դրանց տրված սահմանումներից, համահունչ չեն տնտեսագիտական բովանդակությանը և գործնականում ունեն հարկերին բնորոշ բոլոր հատկանիշները: Արդյունքում, տնտեսական գործունեությամբ զբաղվողների տեսանկյունից վերջիններս դիտարկվում են որպես հարկային բեռի տարրեր՝ մեծացնելով տնտեսական գործունեության իրականացման հետ կապված ֆինանսական պարտավորությունների ծավալը: Տուրքերի մի շարք տեսակներ բովանդակային առումով ունեն հարկերին բնորոշ բոլոր հատկանիշները և, տրամաբանական է դրանք դիտարկել հարկային եկամուտների կազմում: Կարծում ենք, պետական տուրք պետք է գանձվի միայն պետության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց, քանի որ դրա հիմնական տարբերակիչ հատկանիշը հարկերից կայանում է հատուցելիության մեջ: Միևնույն ժամանակ, պետական տարբեր պարտադիր վճարների սահմանումները պետք է հստակ արտացոլեն դրանց տնտեսագիտական և իրավագիտական բովանդակությունները, որպեսզի հնարավոր լինի բացառել ֆիսկալ բնույթ ունեցող տարաբնույթ վճարների սահմանման և գանձման հնարավորությունները և չխաթարել հարկային համակարգի հիմքում դրված գաղափարախոսությունը:

6. Հարկային համակարգի արդյունավետ գործունեության տեսանկյունից կարևոր նշանակություն ունի հարկային օրենսդրության կայունությունն ու կանխատեսելիությունը: Հարկային օրենսգրքով հարկային դրույքաչափի բարձրացում նախատեսող օրենսդրական փոփոխությունները կարող են ուժի մեջ մտնել առնվազն 7 ամիս հետո: Սակայն խնդիրը կայանում է նրանում, որ հարկային պարտավորությունների ավելացումը միայն հարկային դրույքաչափերի բարձրացմամբ չէ, որ կարող է տեղի ունենալ: Ոչ պակաս կարևոր է հարկման

բազան, որի փոփոխությունները կարող են ուղղակիորեն հանգեցնել հարկային պարտավորությունների ավելացման կամ նվազեցման: Այսինքն, անկախ Հարկային օրենսգրքով սահմանված վերը նշված պահանջից, ցանկացած հարկատեսակի կամ պարտադիր այլ վճարի հարկման բազայի փոփոխության միջոցով հնարավոր է ավելացնել հարկ վճարողի հարկային պարտավորություններն ու անմիջապես դնել գործողության մեջ: Հետևաբար, կարծում ենք, որ Հարկային օրենսգրքի նշված պահանջը պետք է վերաբերի ոչ թե հարկային դրույքաչափերի բարձրացում, այլ ընդհանրապես հարկային պարտավորությունների ավելացում նախատեսող դրույթներին:

7. Պետք է հստակ կերպով միմյանցից տարբերակել հարկման բազայի որոշման (համապատասխան նվազեցումների կիրառմամբ) և հարկային արտոնությունների տրամադրման գործընթացները: Առաջինն, ըստ էության, իրենից ներկայացնում է պետության կողմից ձևավորվող պատկերացումները և գաղափարներն այն վերաբերյալ, թե ինչի՞ց պետք է ու կարելի է հարկ գանձել, իսկ երկրորդը՝ ի՞նչ չափով է պետք հարկ գանձել: Հարկման բազայի տնտեսագիտորեն հիմնավորվածությունը, կարծում ենք, հարկային համակարգի արդարացիության հիմնական նախապայմանն է և ավելի կարևոր է, քան հարկային դրույքաչափի որոշումը: Ի դեպ, պետք է նաև նկատի ունենալ, որ դրանք միմյանց հետ սերտորեն կապված են և վճարվող հարկի չափը կախված է թե մեկից, և թե մյուսից: Հարկման բազայի որոշման մեջ են արտացոլվում պետության կողմից տնտեսական հարաբերությունների կարգավորման հիմնական գաղափարները: Հայաստանի Հանրապետությունում հարկային բարեփոխումների հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի հարկման բազաների տնտեսագիտորեն հիմնավորված սահմանումը: Ընդ որում, դա պետք է զուգորդվի նվազեցումների ճկուն մեխանիզմի կիրառմամբ, որոնք կրճատելով հարկման բազան, միաժամանակ կպարունակեն խթաններ տնտեսավարող սուբյեկտների և ֆիզիկական անձանց գործունեության համար:
8. Ակցիզային հարկի դեպքում տնտեսագիտորեն առավել հիմնավորված, իսկ մեր երկրի սոցիալ-տնտեսական ներկա իրողություններից ելնելով ավելի քան արդարացված մոտեցում կլինի որպես հարկման բազա սահմանել մաքսային արժեքը կամ բաց թողնման գինը: Այս դեպքում պետության կողմից հարկային կարգավորման հնարավորություններն ավելի են մեծանում, առավելագույնս նվազեցվում են ռեգրեսիվ դրսևորումները, հարկման մեխանիզմը դառնում է ավելի արդարացի և այլն: Եկամտային հարկի, շահութահարկի և անշարժ գույքի ու փոխադրամիջոցների գույքահարկի մասով հարկային կարգավորումը պետք է իրականացնել ոչ միայն դրույքաչափերի, այլ նաև հարկման բազաների սահմանման ժամանակ տարբեր մոտեցումների կիրառման միջոցով՝ ապահովելով

անհրաժեշտ տնտեսագիտական հիմնավորվածություն: Դա, առաջին հերթին, վերաբերում է հարկման բազան ձևավորող տարրերի և դրանից համապատասխան նվազեցումների սահմանմանը:

9. Յուրաքանչյուր հարկային արտոնություն պետք է տրամադրվի հստակ ժամկետով՝ պայմանավորված տվյալ արտոնության նպատակային ուղղվածությամբ, որը հետագայում պետք է երկարաձգվի միայն ստացված արդյունքների արդյունավետության համակողմանի վերլուծության և գնահատման հիման վրա: Միաժամանակ, օրենսդրությամբ սահմանված կոնկրետ դեպքերում հարկային արտոնությունները պետք է օրենքի ուժով դադարեցվեն՝ համապատասխան պայմանները չապահովելու կամ ստանձնած ներդրումային պարտավորությունները չկատարելու համար: Ընդ որում, օրենսդրորեն պետք է սահմանվեն համապատասխան դրույթներ, համաձայն որոնց Կառավարությունը որոշակի պարբերականությամբ Ազգային ժողովին կներկայացնի տրամադրված հարկային արտոնությունների քանակական և որակական գնահատականը՝ արտահայտված բյուջետային եկամուտների կորստի չափի, ստացված սոցիալ-տնտեսական էֆեկտի, ստեղծված նոր աշխատատեղերի, հարկային արտոնությունից օգտված տնտեսավարող սուբյեկտների ֆինանսատնտեսական ցուցանիշների փոփոխության վերաբերյալ:
10. Անշարժ գույքի հարկման միջոցով սեփականության արդյունավետ օգտագործման վրա ներգործության նպատակով անհրաժեշտ ենք համարում անշարժ գույքի բարձր դրույքաչափ կիրառել այն բնակարանների նկատմամբ, որոնցում սեփականատերը չի բնակվում: Անշարժ գույքի հարկի դրույքաչափի նկատմամբ լրացուցիչ գործակիցներ պետք է կիրառել այն հասարակական տարածքների նկատմամբ, որոնք չեն օգտագործվում: Նման կերպ պետությունը հնարավորություն կունենա ներգործել սեփականատերերի վրա՝ իրականացնելու յուրահատուկ հարկային կարգավորում:
11. Հանրապետությունում ներկայումս գործող ֆիզիկական անձանց եկամուտների հարկման մեխանիզմը ևս ամբողջությամբ չի համապատասխանում արդարության սկզբունքի պահանջներին և լիարժեք չի իրագործում իրեն վերապահված սոցիալական գործառույթը: ՀՀ-ում ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն առավելապես ֆիսկալ գործիք է հանդիսանում պետության ձեռքին, առանց քիչ թե շատ էական սոցիալական մեխանիզմների ամրագրման: Հարկային արտոնությունների կիրառվող համակարգը ոչ միայն չի բարելավում ստեղծված իրավիճակը, այլև խորացնում է այն: Ավելին, ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգը նպաստում է հասարակության եկամտային և գույքային բևեռացման խորացմանը:

Հարկ է նշել, որ եկամտային հարկման ժամանակակից համակարգը չի կարող արդյունավետ կերպով գործել առանց ֆիզիկական անձանց եկամուտների նկատմամբ վերահսկողության գործուն և ճյուղավորված մեխանիզմի: Եթե վերջիններս հնարավորություն չեն տալիս լիակատար վերահսկողություն սահմանել ֆիզիկական անձանց եկամուտների նկատմամբ, ապա անհրաժեշտ է ծախսերի միջոցով վերահսկողություն սահմանել եկամուտների նկատմամբ: Պրոգրեսիվ սանդղակի սահմանումը պետք է ուղեկցվի հարկային հսկողության ուժեղացմամբ, առաջին հերթին, հայտարարագրվող եկամուտների և իրականացվող ծախսերի համապատասխանության գնահատման տեսանկյունից:

12. Հանրապետությունում ֆիզիկական անձանց եկամուտների լիարժեք հաշվառման և հարկման համակարգի կատարելագործման նպատակով առաջարկվում է ներդնել եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգ: Այն պետք է իրականացնել աստիճանաբար (ներդրման սկզբնական փուլում միզոցե նաև կամավորության սկզբունքով), փուլային կարգով, ըստ բնակչության առանձին կատեգորիաների: Ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման համակարգի շրջանակներում առաջարկվում է կիրառել «սոցիալական կրեդիտների» համակարգը՝ հնարավորություն տալով ֆիզիկական անձանց որոշակի խմբերի առանձին սոցիալական, կրթական, առողջապահական, բնակարանային ապահովման նպատակով կատարված ծախսերը (մինչև սահմանված շեմի կամ առավելագույն գումարի չափով) նվազեցնել հարկման բազայից:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ տպագրված աջխատություններում:

1. Ա. Սարգսյան, <<Հարկային վարչարարության դերը հարկային համակարգի զարգացման գործում>>, Հանրային կառավարում, 3-4/2013թ. էջ 125-130:
2. Ա. Սարգսյան, <<Փոքր և միջին բիզնեսի հարկման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները>>, Հանրային կառավարում, 3-4/2014թ. էջ 50-55:
3. Ա. Սարգսյան, <<Հարկային արտոնությունների սոցիալ-տնտեսական բովանդակությունը և նշանակությունը տնտեսության զարգացման գործում>>, Հանրային կառավարում 3-4/2017թ. էջ 525-530:
4. Գ. Կիրակոսյան, Ա. Սարգսյան, <<Հարկային քաղաքականության կատարելագործման և տնտեսական առաջընթացի ապահովման հիմնախնդիրները>>, Այլընտրանք գիտական հանդես, 2017թ. N 4 հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 502-506:
5. Ա. Սարգսյան, <<Տնտեսության հարկային կարգավորման գործիքակազմի կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում>>, Սոցիալ-

տնտեսական զարգացման հիմնախնդիրներ գիտական հոդվածների ժողովածու 1 (5), Գ. Վ. Պլեխանովի անվ. ՌՏՀ Երևանի մասնաճյուղի հրատ. 2021թ. էջ 263-272:

6. Կ. Խաչատրյան, Ա. Սարգսյան, <<Տնտեսության կարգավորման հարկային լծակների կատարելագործման ուղիները Հայաստանի Հանրապետությունում>>, Հանրային կառավարում 2/2021թ. էջ 104-112:

САРГСЯН АНИ ЖОРАЕВНА

ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ НАЛОГОВЫХ ИНСТРУМЕНТОВ ГОСУДАРСТВЕННОГО
РЕГУЛИРОВАНИЯ ЭКОНОМИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - <<Экономика, управление хозяйством и его отраслями>>.

Защита диссертации состоится 16-ого декабря 2022 г. в 13³⁰ на заседании специализированного совета 015 ВАК Республики Армения по экономике, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0009, г. Ереван,

ул. Х. Абовяна 52.

РЕЗЮМЕ

В условиях рыночных отношений большое значение приобретает налоговое регулирование экономики, которое может оказать стимулирующее воздействие как на улучшение экономической среды, так и на повышение эффективности деятельности налоговой системы. Однако анализ инструментария налогового регулирования в Республике Армения показывает, что он достаточно слаб, не уточнены преследуемые задачи, многие из них уязвимы с точки зрения экономической обоснованности, а полученные результаты- спорны. На нынешнем этапе экономического развития большую важность приобретает совершенствование налоговых инструментов государственного регулирования экономики и повышение эффективности их применения. Диссертация посвящена изучению указанных проблем, чем и обусловлена актуальность темы.

Основная цель работы-разработка подходов и предложений, направленных на совершенствование налоговых инструментов государственного регулирования экономики Республики Армения. Для достижения поставленной цели в работе решены следующие задачи:

- изучить суть государственного регулирования экономики и оценить роль налоговой системы в этом процессе,
- изучить принципы и методы налоговой политики, оценить их место в системе налоговых отношений,
- анализировать факторы, влияющие на обеспечение нормальной деятельности налоговой системы и осуществление налоговой политики,
- анализировать законодательно-правовые и организационные основы налогового регулирования в Республике Армения, изучить имеющийся в этом направлении международный опыт и оценить возможности его применения в республике,

- выявить проблемы применения налоговых инструментов государственного регулирования экономики и факторы, влияющие на их эффективность в РА,

- разработать основные направления развития налоговой системы и улучшения налогового регулирования в Республике Армения.

Основные научные результаты работы, обусловленные решением изложенных в исследовании задач, заключаются в следующем:

- на основе анализа налогово-бюджетных показателей и осуществленной политики выявлены факторы, влияющие на сбор налоговых доходов в республике и разработаны подходы, направленные на совершенствование налоговой политики, которые будут способствовать эффективному сопоставлению экономических и социальных целей налогового регулирования,

- в результате всестороннего анализа инструментария налогового регулирования в республике был оценен уровень практической реализации регулирующей функции по отдельным видам налогов и предложены подходы к совершенствованию налоговых инструментов государственного регулирования экономики, в частности, по повышению экономической обоснованности налоговых баз и применяемых ставок,

- с целью повышения эффективности налогового регулирования, а также эффективного сочетания экономических и социальных целей разработаны пути совершенствования налогообложения доходов и имущества физических лиц,

- в результате всестороннего анализа направлений налоговых льгот, их обоснованности и адресованности были разработаны подходы к совершенствованию налоговых льгот как инструмента налогового регулирования.

Ani Jora Sargsyan

PROBLEMS OF APPLICATION OF TAX INSTRUMENTS OF STATE REGULATION OF THE ECONOMY IN THE REPUBLIC OF ARMENIA

The dissertation is submitted for pursuing of scientific degree of PhD of economic sciences in the field 08.00.02- «Economy, Economics and Management of its Branches».

The defense of the dissertation will take place at 13³⁰ on December 16, 2022 at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University, by address: 0009, Yerevan, 52 Abovyan st.

ABSTRACT

In the conditions of market relations, tax regulation of the economy acquires great importance, which can have a stimulating effect both on improving the economic environment and on increasing the efficiency of the tax system. However, the analysis of the tax regulation toolkit in the Republic of Armenia shows that it is rather weak, the pursued problems are not specified, many of them are vulnerable from the point of view of economic feasibility, and the results obtained are controversial. Improvement of tax instruments for state regulation of the economy and increasing the efficiency of their application acquires great importance at the current stage of economic development. The dissertation is devoted to the examination of the mentioned problems, which determines the relevance and urgency of the theme.

The main goal of the work is to develop approaches and proposals aimed at improving tax instruments for state regulation of the economy of the Republic of Armenia.

To achieve this goal, the following tasks are solved in the work

- to examine the essence of state regulation of the economy and assess the role of the tax system in this process,
- to examine the principles and methods of tax policy, assess their place in the system of tax relations,
- to analyze the factors affecting the maintenance of the normal operation of the tax system and the implementation of tax policy,
- to analyze the legislative, legal and organizational foundations of tax regulation in the Republic of Armenia, examine the international experience in this direction and assess the possibilities of its implementation in the republic,
- to identify the problems of using tax instruments of state regulation of the economy and factors affecting their effectiveness in the RA,
- to develop the main directions for the development of the tax system and improvement of tax regulation in the Republic of Armenia.

The main scientific results of the work, due to the solution of the tasks set out in the research, are as follows:

- on the basis of the analysis of fiscal indicators and the implemented policy, the factors influencing the collection of tax revenues in the republic have been identified and approaches have been developed aimed at improving tax policy, which will facilitate an effective comparison of the economic and social goals of tax regulation,
- as a result of a comprehensive analysis of the tools of tax regulation in the republic, the level of practical implementation of the regulatory function for certain types of taxes was assessed and approaches were proposed to improve tax instruments for state regulation of the economy, in particular, to increase the economic feasibility of tax bases and applicable rates,
- in order to increase the efficiency of tax regulation, as well as an effective combination of economic and social goals, ways to improve the taxation of income and property of individuals have been developed,
- as a result of a comprehensive analysis of the directions of tax incentives, their validity and targeting, approaches were developed to improve tax incentives as an instrument of tax regulation.

A handwritten signature in blue ink, appearing to be 'S. K. P.', is centered on a yellow rectangular background.